ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- օգոստոսի 2020 թվականի №---Ա
քաղ. Երևան

«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՇՈԳԵԳԱԶԱՅԻՆ ՑԻԿԼՈՎ ԱՇԽԱՏՈՂ «ՀՐԱԶԴԱՆ-5» ԿԱՅԱՆԻՑ ԱՌԱՔՎՈՂ ՋԵՐՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՍԱԿԱԳԻՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը, 22-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 23-ի №359Ն որոշումը և հաշվի առնելով «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության 2020 թվականի ապրիլի 20-ի հայտը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության համակցված շոգեգազային ցիկլով աշխատող «Հրազդան-5» կայանից առաքվող ջերմային էներգիայի սակագնի հաշվարկման հետևյալ բանաձևը.

$$P = \frac{3,881(W_1*T_1+W_2*T_2*E)}{W_1+W_2} + 206,53$$

որտեղ՝

P-ն հաշվետու ամսում առաքվող ջերմային էներգիայի սակագինն է (դրամ/գիգաջոուլ)՝ առանց ավելացված արժեքի հարկի,

W_1-ն հաշվարկային ամսում մինչև 2576,66 գիգաջոուլի (ներառյալ) շրջանակում «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության համակցված շոգեգազային ցիկլով աշխատող «Հրազդան-5» կայանից առաքված ջերմային էներգիայի քանակն է (գիգաջոուլ),

W_2-ն հաշվարկային ամսում «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության համակցված շոգեգազային ցիկլով աշխատող «Հրազդան-5» կայանից

առաքված ջերմային էներգիայի՝ 2576,66 գիգաջոուլը գերազանցող քանակն է (գիգաջոուլ),

T_1-ն հաշվարկային ամսում «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության կողմից ջերմային էլեկտրակայաններին վաճառվող յուրաքանչյուր ամսում մինչև 10 հազար խորանարդ մետր բնական գազի գործող սակագինն է՝ (դրամ/խորանարդ մետր՝ առանց ավելացված արժեքի հարկի),

T_2-ն հաշվարկային ամսում «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության կողմից ջերմային էլեկտրակայաններին վաճառվող յուրաքանչյուր ամսում 10 հազար խորանարդ մետրը գերազանցող բնական գործող սակագինն է՝ արտահայտված ԱՄՆ դոլարով (ԱՄՆ դոլար/ խորանարդ մետր՝ առանց ավելացված արժեքի հարկի),

E-ն յուրաքանչյուր հաշվետու ամսվան նախորդող ամսվա 25-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հրապարակված մեկ ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքի մեծությունն է:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
--- օգոստոսի 2020թ.